Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Վանաձորի բժշկական կենտրոնին բժշկական սարքավորումների տրամադրման»
ծրագրի եզրափակիչ արարողություն

2023 թվականի օգոստոսի 30-ին տեղի ունեցավ «Վանաձորի բժշկական կենտրոնին բժշկական սարքավորումների տրամադրման» մինչև 81,327 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորին, «Ազնավուր» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն տիկին Քրիստինա Սարկիսյանը, Լոռու մարզպետ պարոն Արամ Խաչատրյանը, առողջապահության փոխնախարար պարոն Արմեն Նազարյանը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար պարոն Արկադի Փելեշյանը և Վանաձորի բժշկական կենտրոնի տնօրեն բժիշկ Վահագն Մկրտչյանը քաղաքապետարանի պաշտոնյաների և բժշկական կենտրոնի աշխատակիցների հետ միասին:

Ծրագրի նպատակն էր ամրապնդել Վանաձորի բժշկական կենտրոնում հիստոպաթոլոգիական հետազոտության համակարգը և բարելավել բժշկական մակարդակը Լոռվա և հարակից մարզերում՝ հիստոպաթոլոգիական բժշկական սարքավորումների տեղադրման միջոցով: Արդյունքում տարեկան մոտ 5000 մարդ օգտվում է ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Ժապավենի կտրում

Տեղադրված բժշկական սարքավորումները

Շրջայց բժիշկ Մկրտչյանի հետ

Մեդիա հղումներ. https://shamshyan.com/hy/article/2023/08/30/1245290
https://armeniasputnik.am/20230830/aznavur-himnadrami-hhum-tshapvoniaji-despanatan-shnvorhiv-vanadzvorum-labvoratvoria-e-bacvel-65098509.html